

Համագործակցության պայմանագիր № _____

p. Երևան

« _____ » _____ 201__ թ.

«Արտադրող»

Ս.Ս.Հ. _____ ծննդյան ամսաթիվ _____ 19__ թ., անձնագրի սերիա № _____,

Բնակության հասցե _____,

կոնտակտային հեռախոսներ _____,

Էլ.փոստի հասցեն(e-mail) _____,

մի կողմից, և

«Դիստրիբյուտոր»

«MADEheart.com Trading Limited» ընկերությունը, ի դեմս տնօրեն Արտյոմ Անատոլիևիչ Տկաչովի, անձ.՝ TT 158797, բնակության հասցե՝ ք. Կիև, Շուսևի նրբանցք, տուն 12, հեռ. +380 67 239 57 24, մյուս կողմից, կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան.

- 1.1. Սույն պայմանագրից բխող պայմաններով և կարգով արտադրողը պարտավորվում է արտադրել և մատակարարել ապրանքները դիստրիբյուտորին, իսկ վերջինս իր հերթին պարտավորվում է ընդունել և վաճառել տվյալ ապրանքներն երրորդ անձանց, հետագայում «Գնորդ»:
- 1.2. Արտադրողը մատակարարում է ապրանքները դիստրիբյուտորին, համաձայն նախնական պատվերի, որը փոխանցվում է արտադրողին դիստրիբյուտորի ներկայացուցչի միջոցով, էլ. փոստի և/կամ հեռախոսի միջոցով:
- 1.3. Ապրանքի գինը, արտադրման ժամկետը, ինչպես նաև մատակարարման ժամկետը համաձայնեցվում է արտադրողի հետ նախնական պատվերի ժամանակ՝ հաշվի առնելով այն տվյալները, որոնք նշված են տվյալ ապրանքի նկարագրի մեջ:

2. Կողմերի իրավունքները, պարտականությունները և երաշխիքները.

- 2.1. Արտադրողը հաստատում է, որ ապրանքը պատկանում է իրեն սեփականատիրոջ իրավունքով, չի գտնվում օտարման կամ կալանքի տակ, ինչպես նաև չի պատկանում երրորդ անձանց:
- 2.2. Արտադրողը հաստատում է, որ ապրանքները համապատասխանում են որակի ընդհանուր չափանիշներին տվյալ տիպի ապրանքների համար, այսինքն՝ ապրանքը նոր է, պատրաստված է առանց թունավոր և ռադիոակտիվ նյութերի օգտագործման, օգտագործման հատկանիշները և ապրանքային տեսքը պահպանված են:
- 2.3. Արտադրողն երաշխավորում է, որ ապրանքը կլինի փաթեթավորված և նշագրված այնպիսի ձևով, որպեսզի կանխվի ապրանքի ֆասսվելը և ոչնչացվելը դիստրիբյուտորին մատակարարելու ժամանակ:
- 2.4. Արտադրողը պարտավորվում է արտադրել և մատակարարել ապրանքը դիստրիբյուտորին ժամանակին, որը համաձայնեցվում է նախնական պատվերի ժամանակ:
- 2.5. Արտադրողը ապրանքի ուղարկման օրը դիստրիբյուտորին հայտնում է հեռախոսով և էլ. փոստով. ծանրացի համարը, փոստային ծառայության անվանումը, ստացողի հասցեն և ստացման օրը:
- 2.6. Ապրանքի մատակարարման վճարը արտադրողից դիստրիբյուտորին կատարում է դիստրիբյուտորը:
- 2.7. Արտադրողը պարտավորվում է դիստրիբյուտորին տրամադրել խորհրդատվական աջակցություն, կապված ապրանքի իրացման հետ՝ տրամադրել մանրամասն նկարագրություն և տեխնիկական բնութագիր:
- 2.8. Արտադրողը հաստատում է, որ իր ապրանքի վաճառքը չի իրականացվում այս կամ այն արտասահմանյան էլեկտրոնային առևտրի հարթակում և պարտավորվում է տեղյակ պահել դիստրիբյուտորին իր ապրանքի վաճառքը այս կամ այն էլեկտրոնային հարթակում սկսելուց 20 աշխատանքային օր առաջ:
- 2.9. Դիստրիբյուտորը պարտավորվում է.
 - իրականացնել ապրանքի ընդունումը արտադրողից:
 - վաճառել ապրանքը՝ համաձայն տարբեր երկրներում գործող առևտրային կանոնների:
 - իրականացնել 100%-ոց վճարում պատվիրված ապրանքի համար 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ արտադրողը կհաստատի ապրանքը դիստրիբյուտորին ուղարկելու, պատրաստ լինելու մասին:
 - դադարեցնել ապրանքի վաճառքը արտադրողի առաջին իսկ խնդրանքով, որն ուղարկվում է հետևյալ էլ. հասցեին info@madeheart.org 10 աշխատանքային օրվա ընթացքում:
- 2.10. Արտադրողն իրավունք ունի.
 - խզել գործող պայմանագիրը նախօրոք՝ 15 աշխատանքային օր առաջ խզման մասին դիստրիբյուտորին տեղյակ պահելով:
 - փոփոխություններ կատարել ապրանքի նկարագրության, տեսականու և տեխնիկական բնութագրերի մեջ, որը նա մատակարարում է դիստրիբյուտորին, նախօրոք տեղյակ պահելով դիստրիբյուտորի ներկայացուցչին հետևյալ հեռախոսահամարով +38095 2222 959 և/կամ էլ. փոստով՝ info@madeheart.org:
 - վաճառքի համար դիստրիբյուտորին առաջարկել նոր ապրանքներ:
- 2.11. Դիստրիբյուտորն իրավունք ունի.
 - խզել գործող պայմանագիրը, նախօրոք՝ 15 աշխատանքային օր առաջ, այդ մասին արտադրողին տեղյակ պահելով:

- հետ վերադարձնել ապրանքը արտադրողին այն դեպքում, երբ ապրանքի բնութագիրը զգալիորեն տարբերվում է այն ապրանքի բնութագրից, որը համաձայնեցվել էր նախնական պատվերի ժամանակ(ապրանքի ամբողջական տեսք, գույն, չափ, ծավալ, օգտագործվող նյութեր):
- արտադրողին խորհուրդներ տալ ապրանքների տեխնիկական բնութագրերի մեջ փոփոխություն կատարելու, տեսականին փոխելու, նոր արտադրանք արտադրելու հարցերում:
- դնել սեփական գները արտադրողի ապրանքի վրա վերջնական սպառողի համար՝ հիմք ընդունելով աշխարհի տարբեր երկրներում նրանց գնային մրցունակությունը:

3. Ապրանքի սեփականության իրավունքը.

- 3.1. ապրանքի սեփականության իրավունքը փոխանցվում է դիստրիբյուտորին ապրանքի վճարումը ամողջությամբ իրականացնելու պահից սկսած:
- 3.2. Հեղինակային և կից իրավունքները պատկանում են արտադրողին:
- 3.3. Արտադրողը դիստրիբյուտորին իրավունք է տալիս օգտագործել ապրանքի անվանումը և արտադրողի անունը ապրանքը շուկայում գովազդելու և առաջխաղացում ապահովելու համար:

4. Վճարման կարգը.

- 4.1. Արտադրողը ստանում է ապրանքի գումարը՝ նախնական պատվերի ժամանակ ձեռք բերած պայմանավորվածության համաձայն:

5. Մատակարարման կարգը և պայմանները.

- 5.1. Ապրանքի մատակարարումն իրականացվում է արտադրողի կողմից՝ հիմք ընդունելով նախնական պատվերը, որը փոխանցվում է դիստրիբյուտորին կողմից էլ. փոստի և/կամ հեռախոսի միջոցով:
- 5.2. Արտադրողը մատակարարում է ապրանքները դիստրիբյուտորին նախնական պատվերի ժամանակ համաձայնվեցված ժամկետներում:

6. Կողմերի պատասխանատվությունը.

- 6.1. Այս պայմանագրի շրջանակներում, եթե խախտվում է կողմերի պարտականությունները, կողմերը կրում են պատասխանատվություն սույն պայմանագրի համաձայն և/կամ գործող օրենսդրությամբ:
- 6.2. Ոչ մի կողմ պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրով չկատարված կամ ոչ պատշաճ կերպով իր պարտականությունների կատարման համար, եթե դա պայմանավորված է ֆորս-մաժորային իրավիճակներով(բնական աղետ, ռազմական գործողություններ, օրենսդրության փոփոխություն, պետական մարմինների գործունեություն): Այն կողմը, որը հայտնվել է ֆորս-մաժորային իրավիճակում, պարտավոր է ոչ ուշ , քան 5 օրացույցային օրվա ընթացքում գրավոր տեղյակ պահել մյուս կողմին ստեղծված իրավիճակի մասին: Եթե այդ իրավիճակը շարունակվում է ավելի քան 3 ամիս, յուրաքանչյուր կողմ իրավունք ունի չեղյալ համարել պայմանագիրը՝ առանց մյուս կողմի կրած վնասների փոխհատուցման:

7. Պայմանագրի կատարումը.

- 7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև կողմերից մեկը չեղյալ կճանաչի պայմանագիրը:
- 7.2. Սույն պայմանագրի ժամկետի լրանալը կողմերին չի ազատում պայմանագրի խախտման համար նշված պարտականություններից, եթե վերջինս տեղի է ունեցել պայմանագրի շրջանակներում, երբ դեռ պայմանագիրը ուժի մեջ է եղել:

8. Եզրափակիչ դրույթներ.

- 8.1. Բոլոր վեճերը, որոնք առաջանում են սույն պայմանագրից կամ կապված են նրա հետ, լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով:
- 8.2. Եթե համապատասխան վեճը չի լուծվում բանակցությունների միջոցով, ապա լուծվում է դատական կարգով՝ համաձայն գործող օրենսդրության:
- 8.3. Կողմերը պատասխանատվություն են կրում ինֆորմացիայի ճշգրտության համար, որը նշված է սույն պայմանագրում և պարտավորվում են ժամանակին գրավոր տեսքով տեղյակ պահել պայմանագրում նշված ինֆորմացիայի փոփոխության մասին:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է կողմերին հասկանալի պայմաններով և տերմիններով, երկու նույնական օրինակից(յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ), որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Կողմերի ստորագրությունները

Արտադրող _____

Դիստրիբյուտոր _____